

ԲԱՏԱՆՈՐ ԳՐԱՐԱՆՈՒԹՅՈՒՆ  
 Պոչխարիոյ համար 10 Ձր.  
 Վեցախնայ 5 »  
 Արտասահմանի հա-  
 մար հարկակ 12 »  
 Վեցախնայ 6 »  
 ԿԱՆԻՍԿ ՎՃԱՎԵԼԻ  
 —)(—  
 Գրութիւնք և ս չնն տրուի  
 —)(—  
 Իրանուցման տողը 20 բառ-  
 քով է. Լրեհին տեղի ան-  
 գամներու համար 20 Օ10  
 գնդ կըլայ:

# ՇԱՐՋՈՒՄ

Պատկեր և գրաւ դրկել  
 Խորագրութեան հասցիին.

Редакция на вѣстникъ  
 «Шаржумъ»  
 Варна.  
 Redaction du journal  
 «Charjoum»  
 Varna (Bulgarie).

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ  
 ԿԸ ՀՐԱՏԱՐԱՆՈՒԹՅՈՒՆ ԶՈՐԵՔՇԱՐՋՈՒ ԵՒ ՇԱՐՋՈՒ ՕՐԵՐԸ

ԳԻՆ 10 ՍԱՆԹԻՄ

ԳԻՆ 10 ՍԱՆԹԻՄ

Отговорникъ: Д-ръ Т. Хр. Стояновъ.  
 АДВОКАТЪ

## ԱՌԱՔԵԱԼՆԵՐ

—)(—

Օսմ. բարեխնամ կառավարու-  
 թիւնը իր հանրածանօթ և արեւի  
 պէս պայծառ մարդասէր հոգա-  
 ծութիւնովը (•) տոգորուած երկու  
 էական միջոցներուն զոր փոխն  
 ի փոխ կը գործածէ իր հայրա-  
 խնամ վարչութեան գէժ ըմբոս-  
 տացող... ապերախտներուն գէժ:

Չարգ ու կաշառ:  
 Առաջինով կը սկսի՝ երկրոր-  
 դով վերջացնել կէտ նպատակ  
 գնելով իրեն:

Առաջին մասը գէթ առ այժմ  
 աւարտած կը թուի: Անոնք որ  
 պահ մը հանգիստ կը խնդրէին  
 այդ անցաւոր աշխարհի մէջ զոր  
 վայելելը անբռնաբարելի իրա-  
 տունքն է ամէն մարդկային ա-  
 բարածի. անոնք որ, պատուի  
 մարդիկ՝ բողոքի ձայն բարձրա-  
 ցուցին, ամէն օր և գազանօրէն  
 ի գործ դրուած պատուի բռնա-  
 բարութիւններուն վախճանը տեսնե-  
 լու համար, Չարգը տեսան ի-  
 րենց բաժինը. Չարգը, ահաբեկի  
 Չարգը եզաւ բաժինը նաեւ ա-  
 նոնք որոնք իրենց ճակտին քը-  
 արիքովը պարարտացած արտե-  
 րէն պատառ մը հայ խնդրեցին,  
 դրաստէ, բարիաէ, սարուկէ քիչ  
 մը տարբեր կեանքով ապրի ու-  
 ղեցին հայրենի հողին վրայ:

Այս բոլոր արդար պահանջներ-  
 րը արեւան կոհակներու մէջ խնդ-  
 դելէ ետքը, թուրքը կը ստակայ  
 իր ըրածէն. կը զգայ թէ վրէժի  
 անողք ամպերը օր մը պիտի  
 պայթին իր գլխուն, և սուկի  
 ուժով, կաշառքով կուգէ անհե-  
 տացնել Տամակիսի սպառնական  
 սուրը զոր հայ յեղափոխութիւնը  
 բռնած է իր գահճի գլխուն վե-  
 րեւ:

Օսմ. կառավարութիւնը պէտք  
 է համոզուած ըլլայ թէ հայ յե-  
 ղափոխականները միայն արհա-  
 մարհանքի թուրք վերապահած  
 են Յուզաի արծաթին և թէ կա-  
 տաղի ցատուսով պաշարուած են  
 շփոթուած ըլլալուն թուրք կա-  
 շառակեր պաշտօնեաներուն հետ:  
 Եւ յետոյ պէտք է գիտնայ թէ

նոյն իսկ և թէ անհասանելի կա-  
 շառակեր, մատեն, ուրանան,  
 ամբողջ ժողովուրդ մը տեղի  
 չտար, չիճանար, չմոռնար, այլ  
 յարարաբար ուղիւնի մը պէս  
 միշտ կայիկածի: Վախնալու է ա-  
 նոր կոհակներէն. զանոնք շար-  
 ժող հովը երկինքէն կուղայ:

Պիւլպիւլեաններ, Քէլէկեան-  
 ներ առաջին առաքեալները չեն  
 որ կը զրկուին ափ առնելու ար-  
 տասահմանի հայ յեղափոխական-  
 ներուն գոները. շատեր ու շա-  
 տեր ասկէց առաջ այդ ապար-  
 դիւն քայլերը առած էին խոս-  
 տումները, խաբէութիւնը, ու-  
 կին, անշուշտ ամէն բան շոյ-  
 լելով բանաւոր ցոյց տալու հա-  
 մար իրենց առաջարկները, բա-  
 ցարձակ մատնութիւններ և  
 միշտ ամօթով ետ դարձան, ա-  
 լելի համոզուած՝ քան թէ համո-  
 ղած: Ուրախալի երեւոյթ մըն է  
 որ հայ ժողովուրդը թէեւ մա-  
 սամբ տրտնջացող յեղ. շարժում-  
 ներուն գէժ, զորս՝ իբր շտրամա-  
 բանող ամբողջ առաջ կեանք նի-  
 թական վառներէն միայն դա-  
 տած է կարգ մը բարձրներու թե-  
 լագրութիւնով, միահամուռ է  
 զայրանալու երբ ամենէն աննշան  
 յեղափոխականն իսկ տեղի կուտայ:  
 Հայը օրտատարով կը սարսոյ սա-  
 սեւ գազափարէն թէ մի՛ գուցէ  
 գայ օր մը ուր չնշուի յեղափո-  
 խական գործը, որուն փարած է  
 և զոր կը սիրէ օրտին ամենէն  
 անկեղծ և թաքուն զգացումնե-  
 րովը, իբր հայրենիքի փրկու-  
 թեան միակ գործին, իբր և մարդ-  
 ապրելու մէկ հատիկ մի՛նոցը:

Եւ հայ ժողովուրդը իրաւունք  
 ունի:

Միայն՝ յոյժ փափագելի է որ  
 այդ վեճ զգացումները լոկ  
 պղատոնական կայութեան մէջ  
 չմնան, և առանց անիմաստ հա-  
 կատութիւններու անձնատուր ըլ-  
 լալու՝ ամէն հայ պահանջող ըլ-  
 լայ մարդկային արդար իրա-  
 տունքներու:

Գիտնանք գնահատել, ուժ,  
 մղում, կենդանութիւն տալ փը-  
 կութեան գործին որ մեր թըշ-  
 նամիին աչքին միակ տաժանելի  
 փուշն է, անոր քունը և հան-

պիտար վարհուրելի մղձաւանջնե-  
 րու վերածող ուրուականն է, ա-  
 ռանց երբեք ականջ կախելու  
 կաշառող ու կաշառուողներու,  
 նաեւ անոնց որ վրէժի, ազատու-  
 թեան, սփոփանքի զգացումնե-  
 րուն գոհացումը, զառամ պա-  
 ռուի պէս, սին արցունքներ թու-  
 փելու մէջ կը փնտռեն, յաւիտե-  
 նականապէս հակած մեր անթիւ-  
 նահատակներու անհուն գերեզ-  
 մաններուն վրայ:

ԳԱՄԵՐ-ԱՐՇԱԻՐ

## ՕՐԸ ՕՐԻՆ

ԽԱՉԱՏՈՒՐ ԱՐՈՎԵԱՆ  
 —)(—

Կովկասի թերթերը այս օրերս  
 վերէն ի վար լցուած են Արովեանով:  
 Մշակ ամբողջ թիւ մը կը հուրիւրէ ա-  
 նոր մահուան յիսնամեակին: Եւ  
 մինչ թերթերը այս կերպով կը սօ-  
 նեն զրական կեանքի մը մեռելու-  
 թեան յիսնամեակը, ժողովրդին ա-  
 մէն դասակարգերն ալ կը պատրաս-  
 տուին և կեղեցիներուն մէջ հողհնա-  
 զիստով բացատրել այն միջին ու  
 խառնիտուռ զգացումները, որոնք  
 զինքը տաք պահած են Արովեանի  
 անուան բոլորտիքը:

Խաչատուր Արովեան, և թէ ոչ զը-  
 րագէտի, ժողովրդական զրոզի համբաւ  
 ունի Տաճկաստանի հայոց մէջ. և ի-  
 րաւցնէ, Տաճկաստանի գրողներէ աւե-  
 լի զանի կը ճանչան խանրու մար-  
 դիկ: Իր գիրքը, Վերջ Հայաստանի,  
 զրազարաններու մէջ գտնել կարելի  
 եղած չէ, բայց մեր պանդուխտ հայ-  
 րենակիցներու գլխուն վերեւ տես-  
 նուած է Արովեանի այդ կրակոտ հո-  
 գին: Շատեր, խանրու մէջ, գոց  
 գիտեն անոր գիրքը, եւ ձմեռուան  
 ծանր գիշերներ անով զբաղուած  
 ու ոգեւորուած են:

Վերջ Հայաստանին, առաջին վի-  
 պական գործն է մեր ազգային վի-  
 պասանութեանց մէջ. իր մէջ ոչ ոք  
 կը փնտռէ հիմակուան արուեստի  
 նրբութիւնները, լեզուական քըն-  
 ժուութիւնները, մաքրութիւնները,  
 հնարքները, հոգեբանութիւնը, և  
 սակայն տառնցմէ վեր բան մը կայ  
 զրբին մէջ. իր լեզուն որ կէս դար ա-  
 ռաջ երեւանի մէջ խոսուած լեզուն է.  
 շատ տեղ մեզի անհասկնալի, իր քը-  
 ժըճեալ կտորներու տակ կը պատաս-  
 քէ ժողովրդային հերոսներ, լեռնա-  
 կանի ուժով, կուրծքերին լս'յն ու

բաց, արեւուն առջեւ խաչուած ու  
 խանձուած, հսկայ կազմուածք-  
 ներ, որոնք իրենց ջիղերուն երկա-  
 թը կաննեն ապառաժներէ, իրենց  
 խորամանկութիւնն ու արագու-  
 թիւնը լեռներու վագրերէ:

Կարօ, Մուսօ, Աղասի, ասոնք են  
 Վերջ Հայաստանի հերոսները, մա-  
 նաւանգ Աղասի, որ ժողովրդային  
 ամենէն մաքուր, ամենէն աղուօր  
 սիրպարն է, քաջ, անկեղծ, ընտանե-  
 սէր, և աստիճան մըն ալ, իր ժա-  
 մանակին տուած կրթութեան չա-  
 փովը, հայրենասէր. ոչ թէ գիրքերէ,  
 աւելի տնական աւանդութիւններէ  
 սովորած է թէ Հայաստան երբեմն մերը  
 եղած է. Անիի հազար ու մէկ եկեղե-  
 ցիին յիշատակներովը կը խորովուի,  
 և օր մըն ալ, իրենց թափառական  
 արշաւանքին մէջ, գիշեր ատեն, կը  
 մտնեն երեք հերոսները Բագրատուն-  
 ւաց մայրաքաղաքը: Ան ի՛նչ յու-  
 ղումներ, ան ի՛նչ թրթուռներ Անիի  
 պարիսպներուն տակ, շէնքերու  
 փլատակներու առջեւ և մայր եկե-  
 ղեցիին կաթողիկէին ներքեւ:

Վերջ Հայաստանին ամբողջապէս  
 յուզումներով շինուած է, և կար-  
 ծեմ, ամէն բանէ աւելի, այդ պա-  
 րագան է որ զիրքը ժողովուրդին  
 ծոցին մէջ աւելի ծանօթ մնացեր է  
 քան թէ գրագէտներու մատենադա-  
 րանին մէջ. ու ինձի այնպէս կը  
 թուի թէ տակաւին շատ պիտի փըն-  
 տըռուի մեր անդրազէտ դասակարգին  
 մէջ, ուր գոյներու ճոխութիւնը, պո-  
 ռացող զաջութիւնը իրենց տաքիտա  
 պաշտողները պիտի ունենան: Ու  
 մենք, բնականաբար, չենք կրնար  
 չնորհապարտ մեծարանքով չչիչել Ա-  
 րովեանի հոգին, որ, մեր մեռելու-  
 թեան շրջանին մէջ, կը ազգային  
 գրականութիւնը գրէթէ բան մը  
 չէր արտագրեր ժողովուրդին համար,  
 Վերջ Հայաստանին ջլատուած հոգի-  
 ներու ու ճնշուած սիրտներու վրայ  
 գրաւ իր Աղասին, ժողովրդային հե-  
 րոսի ամէն զեղեցիկութիւններով զար-  
 դարուած, և կաշկանդուած ձեռքեր,  
 խեղդոտուած հառաչանքներ ձգտել  
 սուաւ գէպի ազատ կեանք, գէպի  
 ընտանեկան պատիւ, գէպի հայրե-  
 նիքի յիշատակներ:

Եւ սակաւին չեմ մոռցած թէ ինչ-  
 պէս խանի մը մէջ պատմուած է ինձի  
 Արովեանի վէպին պատմութիւնը. և  
 վիպասանս, արհեստաւոր մը, իր  
 բռնեքով ու անտաշ նախադասու-  
 թիւններով կըրցաւ ինձի վերլուծել  
 ամբողջ վէպը. Անիի գէպը մանրա-  
 մասնեց, հերոսներուն քաջութիւնը  
 վեր հանեց, Աղասին նկարագրիւր  
 գծեց հրաշալի գիծերով: Այն օրէն  
 ցալսօր կէտ մը անգամ մտքէս վրի-  
 շած չէ. և այս պահուն երբ Արով-

եանի վերջ Հայաստանին կը յիշեմ, երեւակայութեան անջեւ քողի տա- քէն դուրս կուգայ Ազատին, գրքին անմասն հերոսը, հակառի ազուոր պատկեր մը, երկաթը գէտքին վրայ, ատրճանակները գտնին մէջ խրած. եւ հոգի մը որ անոնց վրայ կը թըր- թոյալ գաւկին վրայ գուրգուրացող մօր մը խանդաղատանքով: Եւ անոր հետ, իմ արհեստաւոր պատմիչս ալ, նոյնպէս աչքիս տակ, որ խանի մը սենեակին մէջ, ոչեւորուած, աչ- քերը կածկուուն, ձեռքերը յարտե- նական շարժման մէջ՝ ուրուողներու համար ժողովրդային հերոսը, Աղա- սին, որ իր ձեռքին տակ շինարար, միշտ փախստական իրմէ եւ միշտ իր մտքին ու հոգիին վրայ ծփծփուն:

ՇԱԻԱՍՊ

Ի Զ Մ Ի Ր Լ Ե Ա Ն

—)(—

Եղիպտոսի վիճակին համար Մատթէոս արքեպս. Իզմիրլեանի առաջնորդական ընտրութեան մասին Պոլսէն Մշակի շրջուած թղթակցութիւն մը հետեւեալը կը գրէ:

«Օրմանեան պատրիարք եւ իր վարչութեան վսեմաշուքներն յանկարծակիի եկան լսելով Իզ- միրլեանի ընտրութիւնը, մանա- լանդ երբ Եղիպտոսէ ուղղուած մասնաւոր նամակներ ճնշում կը բանեցնէին պատրիարքին վը- րայ՝ ամէն միջոց ի գործ գնել եւ Սուլթանին հաստատել տալ այդ ընտրութիւնը:

Երկար խորհրդակցութիւններէ յետոյ՝ պատրիարքարանն ուր ուրեմն հնարք մը կըրցաւ գտնել, թէ՛ Եղիպտոսի հայոց կամքին

հակառակ չի վարուելու եւ թէ փառիչահին մեծ հաճոյք մը պատճառելու քաղաքականու- թիւնով այս փշոտ գործին մէջէն գուրս ելլել, այն է, նախապէս հարցունել Իզմիրլեանի՝ թէ կըն- դունի՞ Եղիպտոսի հայոց առաջ- նորդութիւնը, եւ, արտաքին մը- ջոցներով, համոզել սրբազանը որ ինքնին հրաժարի այդ պաշ- տօնէն: Այս վարպետ միջոցներն յաջողցնելով՝ Եղիպտոսի ազդա- յիններուն կողմանէ ունէ առար- կութեան տեղի պիտի չը մնար, եւ Սուլթանն ալ անհունս գոհ պիտի ըլլար պատրիարքէն, որ յաջողեցաւ առանց Բ. Գրան մեծ հոգ պատճառելու՝ փակել խնդիր մը, որ ինչ ինչ տեսակէտներով բաւական տաղնայ կրնայ պատ- ճառել Սուլթանին:—Ձեռք գի- տեր թէ Իզմիրլեան ի՞նչ պիտի պատասխանէ պատրիարքարանի հարցումին, սակայն հաստատա- պէս կրնանք ըսել թէ սրբազանը՝ իբրեւ անձնուէր բարձրաստի- ճան եկեղեցական մը որ գիտէ առաթուր կոխուել ամէն մեքե- նայութիւն՝ որ վնասակար է ազգի եւ եկեղեցիի իրական շահերուն, պիտի չը թողու որ պատրիար- քարանն իր «սինիզմ»ը առաջ տանի այս խնդրին մէջ ալ»:

Ն Ա Մ Ա Կ Ա Տ Ո Ւ Փ

—)(—

Պ. Պ. Ֆ. Լոզովցի. — Ստացանք: Եղբարք Յ. Բլոզչի. — Ստացանք:

—)(—

ԱՍԵՐԻԿԱՅԻ ՀԱՅԵՐԸ

—)(—

Գտն տարիէ ի վեր հայերը Ամե- րիկայի ճամբան սորված են: Այսօր, Մատաչուսէցի, Բոս Այլընտի, Նիւ- Եորքի նահանգներուն մէջ բաւական մեծ թուով հայեր կը գտնուին. սա- կայն ցաւալի է ըսել որ այս երկար տարիներու շարքին մէջ հայ տարբը կարեւոր դերք մը գրաւած չէ Ամե- րիկայի մէջ: Չունի ունէ գործա- բան, չունի մեծ վաճառատուներ, վերջապէս չունի կարեւոր հաստա- տութիւն մը որ հայուն առաջը- մուծեանը ծառայէ: Երբ աչքերնիս կը դարձնեմ ուրիշ գաղթական ժո- ղովրդի վրայ, իրօք կը նախանձինք անոնց վիճակին: Գտն կամ քսանը- հինգ տարի առաջ գաղթող գերմա- նացի, գաղթիցի, եւ մինչեւ իսկ հնահաւաք հրեայ գաղթականներն այսօր հրապարակի վրայ կարեւոր դերքեր գրաւած են: Ունին գործա- բաններ, մեծ վաճառատուներ եւ ուրիշ կարեւոր հաստատութիւններ որոնցմով կապրին իրենց ազգակից- ները: Իսկ մինք հայերս զուրկ ա- մէն բանէ՝ ստիպուած ենք զիմել գոր- ծարանի գոնեը՝ գործ մուրալու: Ե- րեւակայցեք հայ մը որ նորեկ ըլ- լալով անգլիկներէն բաւ մը չէ կարող խօսիլ, ու համրի նման կը զիմէ գործարան: Գործարանի պահապանը, անգլիկ արարած մը, կը յանդի- մանէ եւ շատ անգամ ալ կռնակին քանի մը հարուած տալով չլիս- ղուր որ գործարանին սեմէն ներս անցնի. եւ եթէ յաջողի գաղտագողի ներս սպրդիլ, իսկոյն կը զիմէ պօսին, ձեռքերը սաքերը կրնայ, կէս հայի- րէն կէս թուրքերէն գործ կը խնդրէ, պօսը՝ եթէ բարի մարդ մըն է, խըղ- ճալով անոր վրայ՝ գործ մը կը ցու- ցընէ, ապա թէ ոչ պահապանը կան- չելով դուրս վանել կուտայ: Եստ մը հայեր ալ այսպիսի հալածանքի չեն- թարկուելու համար կաշտաքով եւ

կամ պակաս շարժականով կը յա- ջողին գործ մը ձեռք ձգել: Ցաւ ի սիրտ կըսեմ թէ ամօթխած հայ կի- ներն ալ միեւնոյն հալածանքին կեն- թարկուին:

Ամերիկայի գործաւորական կեան- քը խիստ դժուար է: Առաւօտեան ժամը 6,30ին գործարան կը զլինն եւ հոսած միջնորդութիւն մէջ անխօս կաշխատին ու կաշխատին մինչեւ երեկոյեան ժամը 6, ոչինչ շարժա- կանի մը համար: Վերակացուներուն յանդիմանանքը եւ անլուր հայհո- յանքներն անթիւ են:

Ձեմ ուզեր նկարագրել հայ գոր- ծաւորներուն ներքին կեանքը, որ նախանձելի վիճակ մը չունի. միայն պէտք է ըսել թէ հայերը առաջնա- կարգ գործաւորներ եղած են ամբողջ. եւ ասիկա ամերիկացիներն իսկ կը խոստովանին:

Ուրախ եմ ըսելու թէ վերջին 4-5 տարուան միջոցին հայերը մասամբ սթափած են իրենց խոր քուռէն եւ սկսած են ինքնազօրացման միջոց- ներ սրտնել: Այսօր գրեթէ ամէն հայ գաղթի իր ազատ լստրանն ու գրա- զարանն ունի, կամ ունենալու կը նկրտի: Բարեկործական ընկերու- թիւներ կը հաստատուին, հայերէն լրագրներ կը բազմանան, հրապա- րակային մեծ ժողովներ կը լլան, ուր կը խօսին ծանօթ անձնաւորութիւն- ներ, նիւթ ունենալով յեղափոխու- թիւնը, գաղթականութիւնը, որբե- րու խնդիրը եւ անոնց նման կարե- ւոր նիւթեր: Հայ ժողովուրդը չի խնայեր իր բարոյականն ու նիւթա- կանը այսպիսի կենսական խնդիր- ներու համար, բայց յանցանք մը ունի միայն. այն է իր յոյսերուն իրականացումը չուս սեանելու իղձը. եթէ խնդիր մը քիչ մը երկար կամ խոշորաներու հանդիպի՝ իսկոյն կը յուսահատի եւ խնդիրը երեսի վրայ կը թողու:

Արեւնակ Զօւսիեան

Լօրէնս

—)(—

Վ Ա Ր Դ Պ Ա Տ Ր Ի Կ Ո Ւ Լ Ի Յ Ե Ն Ա Ս Ա Կ Ա Մ Ա Ն Ը (18)

89 Թւականի վերջերին եկայ այն եզրակացութեան որ Հայաստան թիւ- թի դեկալարները ոչ մի գործնական քայլ չէին անում հայկական հարցը փոշու տակից հանելու համար: Հնչակն էլ արդէն երկու տարի էր ինչ հրատարակուած էր. մինք շատ համարներ էինք ստանում, իսկ ես ոչ մի որոշ բան չը գիտէի նրա հրա- տարակողներ ի արամադրութիւններէ մասին: Ռուսահայ յեղափոխական ե- րիտասարդութիւնն էլ բոլորովին ա- նորոշ, ցրված ու տարտամ գրութեան մէջ էր: Այդ բոլորը ինձ վրա ազդե- ցին բոլորովին բացասական կերպով. յեղափոխական արամադրութիւնս գը- րէթէ բոլորովին թուլացաւ եւ ես վճռեցի լուրջ կերպով մտածել ապա- զայի վրա, առանց մաքրից հանելու հայ ժողովրդին օգտակար լինելու ծրագրներս, որոնց իրադրոժումը մասամբ գտնում էի որոշ դիրք ձեռք բերելուց: Ահա այդ նպատակով որո- չեցի քննութիւն տալ Ռուսաց զըպ- րոցութեան ցարկական վկայական ձեռք բերելու համար: Դրա համար սկսեցի քաղաքական դպրոցում գործնական դասեր տալ՝ դարնանը քննութիւն անցընելու համար:

Բայց 90 թւականը կրկին ամէն բան տակնուվրա արեց. այդ միջոց- ներին Բաթում եկաւ Նշան Կարա- պետեանը (կեղծանուն), որը Հնչակի

հիմնադիրներից մէկն էր եւ այս ան- գամ իբր ատաքեալ ճանապարհ էր ընկել՝ կովկաս համակողներ եւ ա- ջակցողներ գտնելու նպատակով: Չը պէտք է ուրանալ որ այդ պարոնը եղաւ Հնչակեան կուսակցութեան ա- ռաջին եւ ամենաեռանդուն պիտի- ներից մինը: Լաւ չեմ յիշում մեր ծանօթութեան մանրամասնութիւնը, սակայն այդ ծանօթութեան հետե- ւանքը այն եղաւ որ Նշան Կարա- պետեանը տեղափոխվեց իմ բնակա- րանը եւ երեք շաբաթի չափ մենք միասին սպրեցինք: Նշանը իր ար- տաքինով բւրրովին քայքայված եւ մաշված մարդ էր. սակայն այդ ֆի- զիքապէս թույլ մարմին մէջ գտնվում էր մի կենդանի ու կորովի հոգի եւ սիրտ. նա անկեղծ էր եւ բոլորովին ողբերգիկ իր գաղտփարով. երբ պաշտպանում էր իր իղէալները եւ հասարակական ձգտումները, շատ ու զեւորվում էր. նրա սեւ զեղնած ու նիհար գէտքում խաղաղ փայլող աչ- քերը վառվում էին եւ արտացոլում Նշանի քարոզած գաղտփարներին կրակը:

Այդ երիտասարդը այն ժամանակ սակաւապէս էր, սովորական գար- ցալու մով. նրա պաշտպանած գաղա- փարները նոր չէին, բայց որովհե- տեւ ինքը անկեղծօրէն ներված էր այդ գաղտփարներին եւ պատրաստ ա- մէն ինչ գոհելու նրանց համար, զրա համար էլ կարողանում էր ազդել եւ սպաւորութիւն թողնել իր լսողների

վրա: Նրա խօսած ժամանակ իսկոյն զգում էի որ արտասանած խօսքերը չոր ֆրագներ չէին, այլ անկեղծ սրտի եւ հոգուց բղխած խօսքեր: Եստ լաւատես էր եւ կարծում էր որ մի երկու տարուած հայկական յեղա- փոխութիւնը կը հասնէր իր վերջ- նական նպատակին եւ կարճ միջո- ցում Հայաստանը կը դառնար գրախ- տի նման երկիր: Իհարկէ գործնա- կան կեանքին անձանօթ իղէալիսոց ուսանողը ուրիշ կերպ էլ անկարող էր լինել եւ այդ պակասութիւնը ա- մէն մի գեոափթիթ երիտասարդ ու- նի, եւ հենց այդ պակասութիւնն է որ երիտասարդներին մղում է զէպի հասարակական վտանգաւոր գործու- նէութիւն:

Երկու երեք շաբաթ մենք շարու- նակ խօսում ու վիճում էինք. այդ ժամանակամիջոցում Նշանը ամէն բան ինձ պարզեց եւ յայտնեց որ ինքը գտնում է Տաճկաստան այնտեղ կաղձակերպութիւններ հիմնելու հա- մար:

Ես խոստացայ առ այժմ գործել Բաթումում եւ նրա շրջանակներում. իսկ այնուհետեւ երբ պէտք լինի անցնել ուրիշ երկիր: Որովհետեւ ես էլ համոզուած էի որ բուն եւ անկեղծ գործողները պէտք է երկրում սկսեն գործել: Նշանը զնաց Տրապիզոն. մինք շարունակ յարաբերութեան մէջ էինք նամակներով. նրա գործե- րը աջող էին. տեղական յեղափոխա-

կան տարրը շատ սիրով էր ընդունել եռանդուն երիտասարդին. իմ գոր- ծերս էլ Բաթումում եւ նրա մօտա- կայ տեղերում աջող էին գնում. ամ- բողջովին անձնատուր էի եղել այդ գործին. վկայական ստանալու միա- քս գրեթէ հեռացել էր իմ գլխից. միայն ձեւի եւ պարագ չերեւալու համար երբեմն քաղաքային դպրոց էի գնում գործնական դասեր տալու:

Եկաւ մայիսը, քննութիւններս ստուի աջող կերպով. վկայական ու- զարկվեց նահանգական տեսչութեանը հաստատվելու համար:

Այնու ամենայնիւ յեղափոխական գործը դեռ մի որոշ ու ոգեւորիչ փաստ չէր ստուել. կրկին սկսեցի փո- քր ինչ տատանվել: Այն միտքը որ կարող էի եկող ուսումնական տարում բաւական ձեռնառու պաշտօն գտնել հայոց ուսումնարաններից մէկում եւ յետոյ անցնել Եւրոպա ուսումնա կա- տարիւղագործել մի քանի բարեկամ ընկերներ իմ աջակցութեամբ՝ սկսեց ինձ հրապուրել: Երկու զգացմունք եսական եւ հասարակական կուռում էին իմ մէջ. զէպի գործը ունեցած թերահաւատութիւնս էլ մի կողմից էր ճնշում: Բաթումում բաւական չփվում էի հայաստանցի մշակների հետ, որոնց մէջ զօրախաւար չէի գտել իրանց վիճակից այնքան դժ- գոհ անհատներ, որոնք պատրաստ լինէին սուր բողք բարձրացնել թուրք բէթիմի գէմ:

(Շարունակելի)

ԱՐՓԻԱՐԵԱՆԻ ՍՈՒՏԵՐԸ

—)·(—

Արփիարեան իր «Մարտի» մէջ, բառախաղերով, կը խոստանայ քր ստուծեանց ստորակը բանալու իբրև թարմ ազգայնոց, կրօն ու իբրև թէ ժընէվականները պէտք է ստիպած ըլլան զիս որ ես գրեմ: Ամէն զէպքերու, ամէն զէմքերու, ամէն սրբութեանց եղծարարը, Արփիարեան, զիս բնաւ չի զարմացներ այդ շարահար սուտովը, և ոչ ալ ասկէ առաջ իր «Մարտի» կարկած բոլոր ստուծեանց հիւսուածքովը զարմացած եմ իր վերայ: Ուրով զլլտով սուծեան ու խաբեցայութեան մարմնացումն է արգէն, և ճիշտ այդ անբն լրբութեամբն էր որ տարիներով խօսեցաւ ու ամիսներով ալ «Մարտի» մէջ գրեց թէ Մամբէի հարցաքննութեան հըրատարակութիւնը ընդհատեց «Իրօջակ», և «չարունակելի» բառը մնաց առկախ, վասն զի ինք ու իրենպէսները քրքիլ բարձած էին, մինչդեռ, ինչպէս գրուեցաւ ասկէ առաջ, հարցաքննութիւնը ամբողջապէս հրատարակուած էր «վերջ» խորագրով: Այս տեսակ արարածն մը անշուշտ կարելի է յուսալ ամէն ստուծիւն իր ամէն մէկ բառէն:

Իայց և այնպէս, ստիկա իմ փոյթս չէ. ես ոչ իր բառախաղերէն և ո՛չ ալ իր նենգաւոր ստուծիւններէն կը վախնամ. իր ամէն մէկ սուտին, կը խոստանամ հակակշիռ դնել յայտնի իրողութիւններ:

ՀՐԱՆԴ

ՀԱՅՐԵՆԻՒՄԻ ՅԻՇԱՏԱԿՆԵՐ

—)·(—

Հիմա կարգը մեզ տալիք կաթողիկոսական կոնդակին էր. քանի որ ինքն իր ստորագրութիւնը գրելէն զատ ոչինչ գիտէր, ինչդեռ ինձմէ ուղած ձեւովս խմբագրել զայն: Ուստի, ես ալ ինքն գաղտնի կանուկովս թակահարութեամբ մը սկսայ սեւագրել զայն: Այդ կոնդակը ուղղուած էր առաջնորդներու, աւագ քահանաներու, իշխաններու ու համայն ժողովրդեան Հայոց Ձորի, Ռչուունեաց, Մուկաց, Սպարկերտու, Խիզանի, Կարկառի, Կեցանի ու Կարճկանի, որպէսզի առանց դժկամակութեան իրենց զաւակները ընկերութեան ձրի վարժարանները շրկեն, ձրիարար կարգալ գրել սորվին, ևւն. ևւն: Կոնդակի սեւագրութիւնը աւարտելէ ետք, վասն զի ուսուցիչ ու միանգամայն կաթողիկոսական դրագիր Պ. Սըրեցեանի յանձնուեցաւ պաշտօնական թղթի վրայ մարտի քաշել, Խաչատուր կաթողիկոսը

անհամբեր իր կաթողիկոսական խոշոր ու կարմիր կնիքը թուղթին ճակատը գրօջմուած տեսնելու, կնիքն ու կնքատուփը առջեւը առած՝ կըրթիկ ու մտտմասնեքուն մէջ կը շարշրկէր: Վերջի ընթացումը երբ քաւարտեց Պ. Սըրեցեան, անմիջապէս առանց կէտի մը անդամ գիտողութիւնը բնեւեւ, կնիքը կարմիր մեկանով թաթխեց ու կաթողիկոսական վեհափառութեամբ կոնդակին ճակատը գրօջմեց. աւելորդ է ըսել որ, կաթողիկոսի գոհունակութիւնն իմրնէս չափազանց էր, որովհետեւ իր պատմական տուժարի մէջ կըթական գործին վերաբերեալ պղտունական գրուածքի պատճէն մըն ալ պիտի զեանգուէր, ու պատմութիւնը շինք իր չըրած գործերի համար պիտի գնահատէր իբր կըթակէր...

Մինչեւ այդ կարմիր կնիք կոնդակը լմնցաւ, արգէն վանքի ճաշն ալ պատրաստուած էր. գալոցին ուղարմիլի աղաքները սեղանը կը պատրաստեն, Վանէն բերուած հողէ փարջով օշին դարձեալ մէշտեղ կելլէ, պարսպ ստամբաներ կը գրգռուին, թանապուր ու Վանի ձուկը կը կարապետեն դառնուկի մսին ու իւղով փխրուին, դարձեալ կաթողիկոսն է որ կը գովէ իր վանքն ու անոր կերակուրները, որովհետեւ մէնք դեռ լաւ չենք մարտած դաննք, ինքնագովութեան տարափով մը ու Պոլսական կերակուրները բազմատուծիւնով կը վերջանայ սեղանը. սուրճէն ետք կը փափագիմ կղզիի նշանաւոր տեղերը այցելել. ինձի կընկերանան Պ. Սըրեցեան ու կաթողիկոսի եղբորսրդի Եղիշէ սարկուազը. կանցնինք արեւելեան կողմի ապառաժներ զրայէն, կելնենք կը բարձրանանք կղզիի արեւմտակողմի ամենէն ազառած մտ գագաթը, ու այդ բարձրութեանէն կը դիտենք ծովն ու անոր առջեւ բացուած անձայրած իր տեսարանը՝ որ կըթակայ կը հասնի Վարագայ ու Սիփանայ բարձրաբերձ գագաթները: Հոս այս ապառաժների վրայ ներշնչմամբ երգած է անմահ Բաթին

«Ձայն տուր ով ծովակ, ինչո՞ւ լըռու՞մ ես,  
«Ողբակից լինել չը կամիս պանդխտիս.  
«Շարժեցէ՛ք զեփեռ ալիքներ վէտ վէտ,  
«Ստանեցէ՛ք արտասուս այս ջրերին հետ»:

Հայրենասիրական սրտահառաչ երգը: Հոս այդ բարձր ապառաժին վրայ ժամերով քարացած կրկնեցինք նոյն երգը. մի կարծէք որ կեանքի մէջ այսքան իրական տխրութիւն կայ: Կրաքարէ կաղմուածքով անյիշատակ գնդիւրէ առաջ եկած հրաբխային ստուծիւնով մը կոշկոտ կը թուր ըլլալ այդ ապառաժուտ

կղզին, որուն զօրաւոր կաղմուածքին վրայ տարիներու եւ դարերու ահագին հողմումով հայկական ազգ. ու կրօնական վառքի ու ինքնահաճախութեան նշանաւոր անաղարտ կը մնայ:

Եւ երբ այլեւս մեր աչքերը կը յոգնին զիրենք գրաւող ամեն տեսարաններէն, կը վառթանք վանք գառնալ, աչքէ կանցունենք նաեւ վանքի հին ու նոր շէնքերն ու սենեակները. մեր ուշադրութիւնը կը գրաւէ երկյարկանի այն կարգ մը կանոնաւոր ու կոկիկ սենեակները, զոր իրկանցի շէնարար Յակոբ Եպիսկոպոսը կ'աղանձ է՝ Խաչատուր կաթողիկոսին Պոլիս բանտարկութեան միջոցին. այս շէնարար Եպիսկոպոսի գործն են նաեւ Ախալանից ձիթահանը, աղորիկը ու ընդարձակ պարտէզները գաւրասանով:

Այսպէս գիտելով ու հետաքրքրուելով կանցունենք մեր այգօրուան ժամերը, երբ կաթողիկոսը ինձ ներկայացուց մատի մը սոկորը, ու պատմեց թէ ասիկա Եղիշէ պատմագրի մատին ոսկորն է, զոր երկու շաբաթ առաջ Չաղուր Ս. Նիշանի վանքէն բերած է, նաեւ մանրամասն նկարագրեց թէ՛ ինչպէս Չաղուր Ս. Նիշանի վանքի գաւթէն այդ ոսկեգարու աղգասէր պատիշի ոսկորները հանելով առանձին տուփով մը միւսնոյն վանքի տաճարին դիմաց թաղուած Սահակ Հայրապետի գերեզմանին քով փոխադրած և ի յիշատակ իր այս փոխադրութեան նոր ճատի ոսկորներէն մէկը մատուցի պէս առած պահած էր: Ձեռմ հաւատարի երկիւղածութեամբ կը համբուրենք այն կմախացած ոսկորը, որ 14 դար առաջ գրիշ շարժած ու հայ պատմութեան ու կրօնի նշանաւոր գործը արտագրած է: Ուստի անմիջապէս կորոշեմ միւս առաւօտ կանուխ Ոստան—Չաղուր Ս. Նիշանի վանքը Եղիշէի գերեզմանին ուխտի երթալ:

ՊԵՏ

[Շարունակելի]

ՔՐՈՆԻԿ

—)·(—

Պարակեօզեան կաակին կողպտուելը յաւերժապէս նշաւակելու համար պոլսեցի հայ մը խելացի միջոց մը գտեր է. առաջարկեր է հանգանակութեամբ գոյացնել համարժէք գումար մը՝ պատշաճ արձանագրութեամբ: Արդէն պատուաւոր ազգային մը 30 սակի տուեր է. արհեստագէտ մը 2 սակի. իսկ Բիլգալիյոն ալ որ այս լուրը կը հրատարակէ, իր կողմէ կուտայ 10 սակի: Վերջապէս ազգը ամէն միջոց ձեռք առնելու է խաչատուակելու համար Պարակեօզեան աւագականոցը:

—Մուշի բանտին կարգ մը հայ անմեղ բանտարկեալներուն ալնեքում շնորուեր է: Ասանց մէջ կը գտնուի

նաեւ ուխտաւոր ցեղաւր, գաւառացի առաջնակարգ գրողներէն մէկը: —Աստարխանի հայուհիները ընկերութիւն մը հիմնելու են, որուն նպատակն է օգնել տեղւոյն հայ աղքատներուն, մանաւանդ կիներուն, սնունդով, հագուստով, դեղով, գերամով, գործ հայթայթելով եւ անոնց համար բանալով որբանոց եւ հիւանդանոց:

—Աստղատականի հայուհեաց ընկերութիւնը որ հիմնուած է 1895ին, Գաւթի մէջ բացեր է մանկապարտէզ մը և կարուձեւի համար արհեստանոց մը:

—Վանայ նահանգին ընդհ. գաւառապի օգնական Օսման պէյ Արճէջ գաւառակը գացեր է քննելու՝ կարգ մը բանտարկեալներու ապօրէն կերպով արձակուելուն եւ ոմանց ալ փախչելու առիթ գտնուելուն խնդիրները:

—Կրօն. ժողովը մերժեր է անասական խորհրդին՝ դրամաթիւր նուիրագործելու. առաջարկը, նկատելով որ նախորդ ժողովներու եւ պատրիարքներու կողմէ գատապարտուած է այդ անհարկի դրութիւնը:

—Ուրփաի եւ ուրիշ տեղերու ամբիկեան միսիոնարներու վարժարաններն ընդունուող որբերու հայ եկեղեցիի գաւառութեան համաձայն Հաղորդութիւն արուելու եւ հոգեւոր պէտքերու մատակարարութեան հոգ տարուելու համար պատրիարքարանին կողմէ կոչու մ եղեր է Տօքթ. Հերիքի, Պայպլ Հաուզ: Տօքթ. Հերիք պատասխաներ է թէ եղած զեղծումներէն իրենք տեղեկութիւն չունին եւ խոստացեր է գրել միսիոնարներուն պատշաճապէս հոգալ որբերը:

ԴԵՍ ՈՒ ԴԵՆ

—)·(—

Դեսալիանէն Պոլիս դարձող զինուորական թուրք բժիշկներն ու զեղազորները կը պահուրտին եղեր՝ Եմէն չլրկուելու համար զօրքերու հետ: Այս հայրենասէր տաճիկները իրաւունք ունին՝ Թեսալիոյ պարարտ դաշտերէն ու բարիխառն կլիմայէն ետք այրեցեալ գօտիէն փախուստ տալու:

Թուրք կառավարութիւնը հատը 25 սակինոց 2500 ձի գներ է Ռուսիաէ: Նոյնչափ ալ Հունգարիաէն պիտի գնէ: Մօտերս երկուքուկէս միլիոն հատ մաւղերեան փամփուշտ պիտի դայ Պոլիս Համպուրկէն: Ինչպէս կերեւայ, մարդը պատրաստուելու վրայ է միշտ:

Հայր Անտուէի գալոցական միսիոնարութիւնը զէպի Սեբաստիա և Կեսարիա ճամբորդութիւն մը ըրած միջոցին յարձակում կրեր է քանի մը չէրքէաներէ: Հայր Անտուէ յաջողեր է ողջ առողջ խուսափիլ:

Կրսեն թէ Թուրքիոյ մէջ բարենորոգում չըլլար: Պետական խորհուրդը այժմ կը քննէ Էնկիւրիի մէջ նոր բանտ մը հիմնելու ծրագրերը, տեղւոյն բանտը փլկլկած ըլլալով: 250,000 զըշ. ձախք պիտի ըլլայ: Փափագողներուն բարի վայելում:

Լոնտոնի կարգ մը թերթեր կըսեն որ իբր թէ Սուրբ թանկ փառաբան յայտնեք է ուղղակի երկրորդ թագաւորին հետ բանակցելը կրէտէն վարձքով Յունաստանի ձգելու համար որոշ պայմանաժամով :

Աթէնքի «Ակրոպոլիս» կը պարզէ թէ Պոլսոյ ուսն գետն պանտաֆոն առաջին քարտուղարը եգէական ծովուն օսմ. արքիպեպոստին մէջ պայտյա մը ընելով կեղծանուամբ, շատ կղզիներ այցելել է, մանրաղնին քններ է բնակչաց հանդամանքները, իզձերը, ցաւերը : Յոյն թարգման ունէր հետք : Այս խորհրդաւոր այցելութեան մէջ հարկ է տեսնել հաստատութիւնն այն զրոյցին թէ այս կղզիներէն շատերը կրէտէի պիտի կցուին՝ անոր հետ միասին ինքնօրէն իշխանապետութիւն մը ձեւացնելու երկրորդ իշխանին ձեռքին տակ :

ԲԱՂԱՔԱԿԱՆ ԴԵՊՔԵՐ

Պ Ա Տ Ե Ր Ա Չ Մ Ը

Սամսըն ծովախալ հինգ շաբթի առտու նորէն յարձակել է Սանթիակոի ամբողջութեան վրայ. մինչ «Օռէկոն», «Մասաչուսէց» զբահաւորները, ու «Իւնտեր» զբահաւորները, ու «Իւնտեր» զբահաւորները, ու «Իւնտեր» զբահաւորները կը ումբակոծէին էսթրէլլաի և Մորրօի հրետանիները, «Հորնէթ» օժանդակ յաճաւորակը Մորրօի արեւելեան կողմը նորակերտ ամբողջ մը կը հարուածէր : Ամերիկեան զրոյցին նայելով, կրակը կէս ժամ տեւել է, «Օռէկոն» մէկ ուսմբը պայթեցուցեր է էսթրէլլաի վառօգանոցը և գրէթէ բոլորովին փճացել է ան :

Երկու շաբթի օրը ամերիկեան արշաւախումբը հասած ըլլալու է Սանթիակո : Բուպաի անհրաժեշտ կալ կլիմային տակ այս նորեկ ամերիկացի բանակներ շատ պիտի տառապին, և իրենք առաջուց պատրաստուած են այն շարժարանքներուն և տուայտանքներուն զորս պիտի կրեն : մինչ կղզիին արեւալակողմի սպանիական բանակը վարժ է կլիմային ու փորձ է պատերազմի դժուարութեանց :

Մատրիտէն եկած լուրեր կըսեն թէ Սանթիակո ութ ամսուան համար պաշար ունի, և կրնայ օգտուել Սէրվէրա ծովակալին սորմիդէն, որ, ինչպէս յայտնի է, դեռ վահուած կը մնայ ծովախորշին գորգը :

Երկու պատերազմիկ կողմին համար ալ, եթէ կռիւն երկարի, ամենէն անպատեհ ու ձախորդ վիճակը պիտի ըլլայ այդ կլիմային տակ ձմեռելը : Իրենք փոփոխակի տաքերուն ու ջրհեղեղեան անձրեւներուն շատ աւելի

զոհ պիտի տան քան նոյն իսկ իրենց մահացու կրակին :

Մանիլայէ կը հաղորդեն թէ Տուրի ծովակալը թող չիտար ապրտամբնեւրուն որ դրուեն Մանիլան : Օտարականները քաղքէն կը հեռանան չէղք նաւերով :

—Հանկ-Քոնիկէն կը գրեն թէ Փիլիպպիններու մեծանուն ապրտամբապետ Ակուինալոս իմացուցեր է ամերիկեան հրապտատին թէ ապտամբները մտադիր են աւժամեայ կառավարութիւն մը հաստատել, բայց թէ կը փախազին որ Փիլիպպինները ամերիկեան գաղթավայր դառնան :

—Սպանիական օժանդակ տորմիդը որ, Գամարա ծովակալին հրամանատարութեամբը, Գատիքոնէն ճամբայ ելած էր, վերջին լուրի մը համեմատ, գացեր նորէն սպանիական նաւահանգիստ մը մտեր է :

Ա Լ Պ Ա Ն Ի Ա

Սուրբանը հրամայել է Սատտէտտին բաշար անմիջապէս Պէրան երթալ որոշելու համար պատասխանատուութիւնները, պատժելու համար յանցաւորները և արկածեալներու յառկացնելու համար հատուցումներ՝ համաձայնութեամբ Գարատաղցի պատուիրակ զօրավար Մարթինովիչի հետ :

Սաստէտտին վաշա և զօրավար Մարթինովիչ Պերան հասել են : Սահմանադրուիլը հանգարտ է :

—Պերկրատէ կը գրեն Ամանս Վոլֆի թէ հին Սերպլոյ մէջ քրիստոնիայ սերպերուն և մահմետական ալպանացիներուն միջեւ կռիւր սուղ եկած է արեւանքինալիքութենէ մը (վէնտէթթա) : Չորս գիւղեր այրուած են : Քրիստոնեաներն ու իսլամները հրազէններ գործածել են : Սերպլոյ լուրերու նայելով ժողովուրդը այս պէնքերն ընդունել է Գարատաղի միջոցով :

—Թուրք և մօնթէնէկրեան սահմանադրութեն հասած վերջին պաշտօնական լուրերը կը ծանուցանեն թէ քրիստոնեայ ալպանիացիները յարձակողականի ըսկսելու և խուժելու են ոչ միայն գաւառին իսլամ բնակիչներուն վրայ, այլ նաև զօրագնդի մը որ Տիւքրօօնէն զրկուած էր խաղաղութիւնը վերահաստատելու համար : Երեք մեռած և բազմաթիւ վիրաւորուած զինուորներ կան :

ԽՆՈՒՆ ԼՈՒՐԵՐ

Թուրք կառավարութիւնը որոշել է 16,000 զինուոր զրկել Սէմէն :

—Պ. Սարիէն վերջնապէս յանձն առել է Պրանտաի նոր նախարարութիւնը կազմել :

—Պոլսոյ Պուլկարական գործակատար Պ. Մարգով—որ վերջերս

Սկիւպի վալի Հոֆըզ փաշայի պաշտօնանկութիւնը պահանջող ծանուցալի մը տուած էր Գրան—իմացած ըլլալով թէ նոյն Հոֆըզ փաշան իսլամ հասարակութեան մէջ երկու աղերսաղբեր ստորագրել կուտայ, որոնցմէ մէկը Սինէսիուս մետրապօլիտին հրաժարեցուած կը խնդրէ և միւսը վատահոթութիւն կը յայտնէ հանդէպ Հոֆի վաշայի՝ անոր պաշտօնին վրայ մնալը խնդրելով, Պուլկար կառավարութեան կողմէ երկրորդ նօթա մը տուած է որպէս զի այդ երկու թղթերը ըստ այնմ ընդունուին :

ՀԵՐՔՈՒՄ

Փ. Պոլսոյ մեր մասնաւոր թղթակիցը կը փութայ իմացնել մեզ թէ Սօֆիաի թագ. խորհուրդը եւ քահանան հակառակ իրենց եղած դիմումներուն մերժած են խնդրուած վկայականը յանձնել այն լրտեսին որու վրայ խօստուած էր մեր նախորդ թիւին Փ. Պոլսոյ թղթակցութեան մէջ : Ինչպէս մեր թղթակից, նոյնպէս ալ մենք ուրախութեամբ կարձանագրենք խնդրին իսկութիւնը որ պատիւ կը բերէ Սօֆիաի ազգ. մարմնին :

ԱՊՍԱՍԲՈՒԹԵԱՆ ՓՈՐՁ

Եւրոպական թերթերը անցեալ շաբթու հրատարակելին Ռուսիոյ մէջ տեղի ունեցած ապտամբութեան մը լուրը որ աւելի յիմարի մը շահատակութեան տպաւորութիւնը կը թողուի :

Իհասան Մէհմէտ Ալի անուն իսլամ մը, մոլեռանդներու խմբի մը զլուիլը անցած, Անտիճանի մէջ յանկարծ ուս զօրքերու վրայ յարձակած և անոցմէ շատերը ջարդած էր :

Վերջին տեղեկութիւնները կը ստուգեն թէ Իհասան Մէհմէտ բարձրագոյն դերք մը կը գրուէ Ֆէրիկանաի նահանգին իսլամ կղերական գասուն մէջ : Եւրոպական պատճառը քանի մը առաձնաշնորհումներուն ջնջումը ինչպէս նաև իսլամական զարթումը իբր արգիւնք թրքական վերջին յաղթանակներուն յունաց դէմ :

Ապտամբապետը որ այժմ գերի բռնուած է և զղչում կը ցուցնէ, խոստովանած է թէ Վ. Պոլսոյ իսլամ կղերին հետ զաղտնի համաձայնութենէ մը ետքն է որ համարձակած է սուրը պատերազմի գրոշը պարզել : Խոստովանած է նաև թէ ապտամբութիւնը մէկէ աւելի կէտերու վրայ պիտի պայթէր եթէ անակընկալ պարագաներ արգելք չըլլային :

Կեզը կառավարութիւնը պաշարման վիճակի ենթարկած է ամբողջ Ֆէրիկանաի նահանգը և մանրաղնին քննութեան մը ձեռնարկած :

ԳՈՐԾԱԿԱՏԱՐ ԵՒ ՅԱՆՁՆԱԿԱՏԱՐ  
Գիրք ամէն լեզուէ, թուղթ, մեջան եւ ամէն կարգի դասական առարկաներ, ուզողաց կը զրկեմ փութով : Հայ եւ այլ լեզուաւ թերթերու բաժանորդ գրուել ուզողաց գիւրութիւններ : Բէսթընձէյէն եւ այլ անգղերէ, Ամերիկա եւ այլ ուրեք գնալ փախագողաց խորհուրդ, գիրութիւն եւ ծանօթութիւններ :  
Հասցէ՝  
Paul Gigerian, strada mangalia No. 141  
Constanta (Roumanie)

ՍԱՓՐԻՉ

—) : (—  
Պատիւ ունիմ ծանուցանել արգոյ հասարակութեան թէ ժամանակէ մը ի վեր աշխատելով Օթէլ Բոմբէրալի կից սփրիչ Անկէլ Եուվանօֆի քով եւ տեղույս պուլկար եւ հայ պատուարժան յաճախորդացս վստահութիւնն առ իս գրաւած լինելով, այս անգամ մասնաւոր խանութ մը բացած եմ Ուլիցա Բրէսլաւսքա, օթէլ իմրէրիալի կից :  
Լիւսոյս եմ թէ պատուարժան հասարակութիւնը չպիտի զրանայ շարունակել ինձ իր քաջակերը, այցելելով այստեղեան իմ նոր խանութը ուր պիտի գտնէ կանոնաւոր գործ եւ ամենամեծ մարքութիւն :  
Միկրան Սեդրակեան  
Եւ իմ ընկերս  
Սեքոն Ծաղիկեան  
6

ՃԱՇՈՐԱՆ ԵՒ ԶԲՍԱՐԱՆ

—) : (—  
ՀԱՃԻ ԲԱՆԱԳՕԻՆ ՃԻՇԴ ԴԵՄԸ  
Կը բանկցուէ Պ. Տիգրան Թիփեկեան եւ ընկիւր  
Արհեստին մէջ կառարելութեան հասած երկտասարդ հայու մը ձեռամբ սարքուած այս հովասուն, մաքուր ու զեղջական հաստատութիւն ոչ միայն պատիւ կը բերէ հայ ճաշակին, այլ եւ մեծ խթան մը կը ըլլայ որ հայ ու օտար փափկակերներ իրենց գարնանային ու ամառային ժամազրաւայր մը ընեն զայն զօրանելու եւ ճաշելու, Պոնտոսեան ախորժարի հովերուն ու Սեւ ծովի կապոյտ տարածութեան անջեւ :  
Հակառակ այս հրապուրիչ առաւելութիւններուն, յաճախորդները պիտի գտնեն յոյժ զրուամասշիլ զիւներ թէ ըմպելիքի թէ կերակուրների մասին : 12

ՊՕՐՍԱ

—  
Վառնա 13 Յունիս  
ՊՈՒՂՏԱՅ  
Վալիօն եօգ, լիպրա 47—51, հէքթօլ 9.50—10 ֆրանք  
Արապա, լիպրա 47—55 հէքթօլ 8.50—10 ֆրանք  
ԱՐԲԱ  
Լիպրա 38—40 հէքթօլ 4.80—5.20 ֆրանք  
ՄԸՐԱՐ  
Վալիօն եօգ, լիպրա 57—58 հէքթօլ 7—7.50 ֆրանք  
Արապա, լիպրա 57—60 հէքթօլ 7.80—8 ֆրանք  
ՅԱՍՈՒԼԵՍ  
100 օգգասը 15—20 ֆրանք՝ մալա կէօրէ  
Առապա մուսուլէլէի Նարօլէոն 21 ֆրանք հիսապը իլէ տիր.  
Կիւնտէ 2—3 արապա պուղտայ, 3—4 արապա արրա, կէմէքմէ տիր :